


ՔԱՏԱՆՈՐԻ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Տր.
Տարեկան 6 »
Վեցամսեայ Արսասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար Տարեկան 3 չր.
Վեցամսեայ 1.50 »

Մանուցանել տողը առաջին երեսին համար 40 ս
իսկ վերջին երեսին համար 20 սակքիւլ է. երեքին անգի անգամներու համար 20 Օ/Ր զեղջ կըլ
այն:

Վառնայի համար ձ. ոքի 10 սակքիւլ



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՄԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԳՈՒԹԻ ԵՒ ՇՈՒԿՈՒ ՕՐԵՐԸ

Նախակ եւ դրամ գրիկ
հայագրութեան յիշու
ցիկն .

Редакция на вѣстанкѣ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoun“
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
ձեռքի
(20 ՄԱՆԹԻՍ)
Պուշկարիոյ համար
ձեռքի
(15 ՄԱՆԹԻՍ)

Գրութիւնք եւ չին տրուի

ՇՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՎՈՐՈՒՄԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԿԵԿ ՎՃՍՐԷ

Տ Ե Ռ Օ Ր

Վասպուրականի կեդր. Կոմիտէի որոշմամբ տէնօրի ենթարկուեցաւ յայտնի մատնիչ ԽՂԻՎ ՍԷՄԷՐՃԵՆԻՆԸ փետրուար 2/15 ին կիրակի երեկոյ ժամը 11ին . Տէնօրիստը ազատ է .

ԵՒՐՈՊԱՅԻ ՂԱՅ ՈՒՍԱՆՈՒԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Բրիտանի շահագումարը չը կայացաւ . Հարկաւոր է նշանակել նոր շահագումար , սակայն մենք մեզ ձեռնհաս չենք համարում առանց «Միութեան» տեղական մարմիններին խորհրդակցութեան , սրտիչ նրա տեղն ու ժակահակը .

Բարեհաճեցէք ժողով գումարել և որքան կարելի է շուտ ուղարկել մեզ ձեր կարծիքը , թէ՛

- 1) Որ քաղաքն էք յարմար դատում շահագումարի համար .
- 2) Որ ամիսը (ամառը , աշնան թէ ապրիլին՝ ինչպէս միշտ) .

Տեղի վերաբերմամբ չը պիտի մոռնանք քաղաքական տրամադրութիւնները . Բրիտանի ոստիկանութեան վարմունքը՝ դրան ապացոյց . Ամենայն դարձեւ , մեր կարծիքով , Շվեյցարիան կամ Ֆրանսիան է . քանի որ Գերմանիան , ինչպէս երեւում է . շատ էլ հաշտ աչքով չէ նայելու մեր համախմբման , իսկ միւս երկիրները , ինչպէս Անգլիան , Իտալիան և Աւստրիան , հեռաւորութեան տեսակետից՝ յարմար չեն , և բացի դրանից՝ հայ ուսանողներ աշխույժ չատ քիչ կան .

Պատասխանեցէք , խնդրում ենք , ոչ ուշ քան մինչեւ մայիսի վերջը .

Ընկերական բարեւանքով
Կարգադիր Յուլիանոսով
1903 , մայիս 10
ԺԸԵԵԻ

ԻՍ ՆՈՒԵՐԱ

Զեյթունցի

Լայնածաւալ հովանի խորը ամառի՝
Ինկած է ան - Մայր Հայաստան - մերկ , հիւանդ .
Ու սարսափով իր շորս կողմը կը նայի ,
Ա՛լ գեղնած են նախկին դաշտերն արգաւանդ .

Եւ իտրերէն ամառութեան մեղմող՝
Կը լսուին խուլ հառաչանքներ , ողբ , աշխարհ ,
Դաշտին վերայ կը շրջւի սարսուռ , գող .
Արդեօք կապրի՞ թէ մեռած է ա՛լ աշխարհ :

Ու Հայաստան անոք , լըբուած հոն մինակ՝
Կը տառապի սև յուշերովն անցեալի ,
Իր ցիրուցան մազերն ի վար սպիտակ՝
Կիջնան ջե՛րմ ջե՛րմ կայլակները վշտալի :

Բայց ահա՛ հոն՝ քառասորակ ծիաւոր
Սէգ քաջ մը , որ դաշտին խորէն կարուէր .
Եւ մահաւերձ Մայր Հայաստան տեսաւ որ
Հայ կըրուի զինուոր մըն էր անձնուէր :

«Վերկա՛ց . մա՛յր իմ , վեր կա՛ց ա՛լ դուն վիշտունիս
Ահա հոս եմ , ես որ միշտ քե՛զ պաշտեցի ,
Ուխտեցի՛ տալ վերջին կաթիլն արիւնիս ,
Գեղի համար՝ ես Լեռնական Զէյթունցի .»

Ու վեր առաւ Մայր Հայաստան ալեւոր
Իր գլուխը խինդով , խանդով մը ժպտուն ,
Եւ արձագանգ արելն լեռներն ինաւոր
Իր յուսալիր աղաղակին , «Վե՛շ Զէյթունցի» .

Վեա

ԳԵՂՈՒՆԻ

Անուան իսկապէս համապատասխանող պատկերազարդ մեծագիր թերթը լոյս տեսաւ . Կը բաղկանայ փաստահեղ փայլուն թղթի վրայ տպուած 40 միծաղիր քառածալ թերթերէ , գեղեցիկ , ինը գոյնով կողքէ մը մէջ կազմուած . Բազմաթիւ ազգային կեանքէ անուամ նորանոր պատկերներէ զատ , Գեղունին զարդարուած է նաեւ եօթը հատ բազմազունի պատկերներով , որոնց մէջ յատուկ ուշ կը գրաւէ Աւարայրի դիւցազներու խումբանրկարն : Մենք ներկայ ազգովս չենք ուզեր և ոչ իսկ կարող ենք այս նոր Գեղունիին նկարագիրն և մատենաստեղծան ընել թէ գրական և թէ գեղարուեստական տեսակետով : Այդ թողով ուրիշներու , միայն այս կըրտենք , որ ինչպէս պատկերներու ,

ենյայտ և յօդուածներու յատուկ ընտրութիւն եղած է : Այս Գեղունին ամենայն կերպով կը գերազանցէ ցարդ լոյս տեսածները , և յիշատի կրնայ կանգնիլ իրր գրական և գեղարուեստական թանկագին կոթող մը հայ գրականութեան մէջ .

ԳԵՂՈՒՆԻՆ ԿԱՐԺԷ ՄԻԱՅՆ 10 ՅՐ . ԿԱՄ 4 ՐՈՒՅԼԻ

Գեղունին ամեն կողմ տարածելու համար , վիճակահանութեան կը դընենք մեր տպարանէն լոյս տեսած շարք մը արժէքաւոր գրքեր : Տասը օրինակ մէկ անգամէն գնողները այդ վիճակահանութեան մէկ թիւ կ'ունենան , քսան օրինակ գնողները երկու , և այլն .

Գեղունին կը զրկուի յատուկ դրամով ապահովագրեալ . քաղմաթիւ օրինակները կը զրկուին արկղներով : Որոնք որ մեզ հետ յատուկ հայր

չունին , պէտք են դրամը կանխիկ զրկել : Գեղունին ստանալու համար պէտք է գրիկ հետեւեալ հասցէին .
Էմրոխիւռնի Արմենիկ
Ս. Լազար Վեցամսեայ (Ինչպիսայ)

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՍԱՐ ՀԱՆԳՍՆԱԿՈՒԹԻՒՆ ՏՕՊՐԻՉԻ ՄԷՉ

(Շաբ. նախորդ քիւնն եւ վերջ)

Անկել Թումաթ	4 ֆր
Մ. Սաշիկ Մ. Գեւորգեան	1 »
Հաճի Տալուտեան	1 »
Հովհաննէս Հ.	1 »
Համբար. Մամիկոնեան	1 »
Զաքար կիրակոսեան	1 »
Մկրտիչ Գ. Մերուհեան	1 »
Յարութիւն Յ. Անանեան	1 »
Արթին Մ. Կարապետ	1 »
Բանասէր ոմն	1 »
Նահապետ Մինասեան	1 »
Մարտիրոս Սարգիսեան	1 »
Մկրտիչ պուրկապետ	1 »
Ապաճիէֆ Ռուզոյ	1 »
Արթին Գոգոնեան	1 »
Միսակ սանփանեան	1 »
Գ. Առաքելեան	1 »
Հովհաննէս Սարգիսեան	75 սթ.
Ռուբէն Փէպէճեան	75 »
Ս. Յ. Ո.	50 »
Սարգիս Պաղտասարեան	50 »
Արտաշէս Սանփանեան	50 »
Ղազարոս Օղզաճեան	50 »
Աւետիս մկրտիչեան	50 »
Մելքոն Կարապետեան	50 »
Մաքսուտ Մելքոնեան	50 »
Ալիքսան Հովհաննէսեան	50 »
Գրիգոր Փափաղեան	50 »
Ստեփան Թալալեան	50 »
Ղազարոս Հովհաննէսեան	50 »
Յակոբ Նիկողոսեան	50 »
Իրարան Նազարեան	50 »
Արթին Գրիգորեան	50 »
Սարգիս Պետրոսեան	50 »
Հրանդ Յ. Յովհաննէսեան	40 »
Անսէն Ապաճեան	40 »
Պետրոս գրիգորեան	30 »
Տիկիւններէ , Օրիորդներէ	
Հաւագուած	41 ֆր. 90 »
Գրիգոր Յարութիւնեան	1 ֆր.
Սարգիս Շալճեան	1 »
Շարժումն նստորդ թիւէն	101 »

Գումար 175 ֆր.
Մասնախումբ
Յ. Ճիշտ-Չառաջիկ
Տրդատ Եղորտեան
Գէորգ Մ. Գեւորգեան
Գէորգ Յ. Տէմիրճեան
Միսաք Աճէմեան

ԱՐՄԵՆԱԿ ԼԻՆՉԻ



Արդէն յայտնի է մեր ընթերցողներուն թէ անգղիացի նշանաւոր գիտնական և հայտնէր Պ Լինչ — որ մեր կողմէն հստակ արժեքներ արդէն իր երակներուն մէջ — Հայաստան բուսած հրաշալի երկրին մէջ գիտական ճանաչողութիւններ կատարել է և բոլոր իրերն ու երևոյթները մանրաքննին խուզարկութեան ենթարկելէ ետքը գրած է «Արմէնիայի այն երկու չոյակապ հատորները, անգղիերէն, որոնք հիացում և սքանչացում պատճառեցին Արեւմտեցի շատ մը գրական և գիտական մեծ գէժերու :

Յարգելի Պ. Տօնապետեան նկատի առնելով որ հայ հասարակութիւնը անգղիական լիզուինանդիստակ լինելուն պատճառաւ՝ գտնուում է գրեթէ բացարձակ անկարելիութեան հանդէպ՝ առնելա մասին իւր երկրին նուիրուած այս հսկայական աշխատութեան իսկական ճշտակըն հրատարակեց այդ մեծ հատորներուն մէջ աղբոր մանրակարգը՝ 111 էջերու մէջ ամփոփուած : Պ. Տօնապետեանի այս գործին կցուած է նաև մասնաւոր գլուխ մը — Լինչի Արմէնիան՝ գիտական և քննադանական դատաստանի առաջ — որ 46 էջերու մէջ ամփոփուած են 14 քննադատականներ կամ աւելի ճիշտը ներքողականներ այդ գրական հրաշակերտին համար Փոքր ասիոյ պատմութեան մասին գերագոյն հեղինակաւոր գիտնական Բրոֆէսոր Ռամզի, հռչակաւոր արեւելագէտ Ռոֆ. Վամբրիի, ոօֆ. Թոնիքերի և ուրիշներու կողմէն գրուած : Կրթին սկիզբը գիտեցուած է նոյնպէս Պ. Լինչի մէջ մաքուր պատկերը Հայաստանի ուղեորական հազուատով և իր մէջ ինքնակենսագրականով :

Պ. Տօնապետեան տուաւ իր այդ հատորը հայ հասարակութեան՝ որ մի կերպ գիւրու թիւն ընծայէ անոր՝ գէթ մի աղօս գաղափար կազմելու համար Պ. Լինչի հատորներուն որպիսութեան վերաբերմամբ, որովհետև շատ ծանր ու դժուար գործ մըն էր այդ

հատորներուն ամբողջական թարգմանութիւնը տալ հայ ընթերցողներուն ձեռքը :

Մեր այս քանի մը տողերուն առիթ տուաւ Բագրատիկայի վերջին թիւին մէջ մեր կարդացած սա ուրախալի լուրը թէ՛ այդ հանդէսի պատուարժան խմբագրութիւնը յանձն առած է Պ. Լինչի գործն իր ամբողջութեամբ Հայ Հասարակութեան տալ՝ Հ. Ա. Վ. Արեւանի թարգմանութիւնով :

Մենք պէտք է շնորհակալ ըլլա՞նք իւրաքանչեւ աղբոր բառի շարելու ջանադրելու համար Բագրատիկային այս գործը և անով հայ սպիտակ մատուցուելիք ծառայութիւնը : ատոր ապացոյցը ինքը՝ գործն է արդէն : Մենք պէտք է կրկնենք, սակայն, հայ ազգին ուշադրութիւնը հրաւիրելու այս ծառայութեան վրայ :

Պ. Տօնապետեան իր հատորին մէջ խօսելով այն ընդունելութեան վրայ, զոր գտաւ Պ. Լինչին հոյակապ գործը, կըսէ. «հրատարակչներ զկայտութեամբ ամենագործնական հետաքրքրուողներն եղած են Ամերիկացիք, իսկ ամենէն անգործնական հետաքրքրուողներն են ցարդ Հայերը, որոնք հայրենիքին և ազգային վիճակին նուիրուած է այս մեծ աշխատութիւնը սակայն, » Եւ աւելի վարը կաւելցնէ թէ՛ «այս անտարբերութիւնը ևս աւելի գտապարտելի է թուում այն զօրաւոր պատճառաւ որ զիրքը ըստ ինքեան այնպիսի գեղեցիկ ազգային յիշատակարան է որ եթէ նուիրուած լինէր նոյն իսկ Անգլիոյ կամ Ճորանսայի կամ Գերմանիոյ պէս երկրներին, սոցա իւրաքանչիւր ժողովուրդն անգամ արդարացի պարծանք պիտի զգար ազգային այս տեսակ մի գրականական կոթողի արժանանալուն համար : »

Հայաստանի այս սնդուգական յիշատակարանին հանդէպ մեր անտարբերութիւնը գուցէ ու զինքը արդարացին անով որ՝ Անգլիերէն չենք հասկնար, թէ եւ այդ պարագային իսկ այս անմահ գիրքը թանկագին զարգ մը պիտի ըլլար հայ թանգարանի մը

մէջ մանաւանդ իր հրաշալի քարտեզովը :

Բայց հիմայ որ վենետիկի հայրենասէր Հայրերը յանձն կառնուն այս ծանրագոյն գործը՝ հայ ընթերցողներու սիրուն համար, վերջիններս պիտի գիտնան արդեօք պէտք եղած ինչպէս, գործնականապէս գնահատել այս առժանելի աշխատութիւնն ալ, ու վարձատրել անոնց, այդ հայրենասէր կրօնականներուն ուրիշ բոլոր գործերուն շարի աղբոր այս գործն ալ : Ահաւասիկ այն կէտը, որուն վրայ պարտականութիւն համարեցինք ուշադրութիւնը հրաւիրել ոչ միայն Շարժումը ընթերցողներուն այլևս բոլոր հայերուն :

Եւ մենք յոյս սեւինք — կամ աւելի ճիշտը յուսալ կը սիրենք — որ հայ հասարակութիւնը պիտի այս այս առիթը ապացոյցը իր հայրենասիրութեան՝ գործնականապէս — գիտմամբ կրտսորագծենք ու կր կրկնենք այս բառերը — զեմանստով ինչ որ գեղեցիկ է, ինչ որ օգտակար է :

S. Ա.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պոստի, 41 Վալիս 1913

Ստորագրող էջերուն մէջ, շատ ատեն զրուած են և կը գրուին — Պոստի մէջ — լուրեր՝ տարբեր նիւթերու վրայ, սակայն կարծեմ ամենէն աւելի խօսուած է գաղթական հայերու նկատմամբ :

Ճիշդ խօսելով, կարծէ ալ ատենցմով վրադիլ երբեմն, քանի որ հոմ քաղաքի թիւն մը կը կազմեն և կրնան շատ պարագաներուն մէջ՝ օգտակար հանդիսանալ թէ իրենց և թէ ուրիշ ազգային կարեւոր պահանջներու տեսակէտով, նիւթապէս և բարոյապէս :

ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՀԱՅ ՀԱՐՈՒՑՆԵՐԸ



Երբ ազգ մը ճակատագրական բուսակէ մէջ կը գտնուի՝ պէտք է իր հաշուելիութիւն մէջ ունենայ նաև անխուսափելի չորհրդեր : Այսպէս եղած է բոլոր մեծ խոփոքներու ատեն, երբ յեղափոխական ուժը՝ զայնորովի տապալը ձեռքին՝ բարեշքութիւնը ճամբուն թուրիւր կը ջանայ քարուքանդ ընել :

Մենք հայերս, նոյն հասարակական ու կեանքի բնական երևոյթներու ազդեցութեան տակ ենք, յաճախ ամենաբարձր եւ մաքուր իտէալի մը հասնելու համար, ամենաբուռն եւ ոճրային միջոցներու ստիպուած ենք դիմել : հաւաքական բընազգի խտտապահանջ օրէնքով, որ պատասխանատու է գոյութեան իրաւունքին :

Հայերը իրենց յեղափոխական ամբողջ կեանքին մէջ՝ իրենց ճամբու վրայ ակամայ սիտեցին շատ մը զանգեր, որոնք կարծես հարկաւոր էին գործին մեծութիւնը ու նուիրակա-

նութիւնը տեսլի չեղանու համար : Իսայ երբ զօրերութիւնները հասարակական կեանքին տեսակ մը բընական եւ անհանձն օրէնքները կը ըլլան երբ ազգի մը գոյութեան կողմէն մէջ կը պատահին արտակարգ դէպքեր, պէտք է աւելի բարձրէն նայինք իրերու վրայ, որպէս զի մեր զատաստանը չըլլայ յայտուտ : Պէտք է յաճախ մեր գոյացումներն անվերջ մնան գոհարբութեան անջուր : Մենք որ սնած ու կտանուած ենք ամբողջ ազգի մը շնորհալիք մարտիրոսութիւնովը, դեռ փութկոտ ենք, ամէն բոլոր չփոփելի ազգային հարուստի մը մասնակի եւ միշտ փոքրագի բարեբարութիւնը ազգային մեծ գողափոխուն ճեւտ : այնպէս որ կարդարանայ կարծես այն իօսքը թէ մենք հայերս տիրացու ժողովուրդ մըն ենք եւ ուրիշ կարծես օձիքնիս չպիտի կրնանք ազատել, հակառակ մեր քաղաքակրթական նոր եւ լուսաւոր ըմբռնումներուն :

Իբրևն ժամանակները կատարուած յեղափոխական սնդուգութիւնները մէկ քանի հարուստներու վրայ : ցցուցին թէ որքան հասցած է մեր ժողովուրդը յեղափոխութեան կամ ազգային դատին նշանակութիւնը եւ որքան տիրացուական պատու մը ու-

նի դէպի ժամ շինողները կամ ժամուրու կտակ ընողները, նպատակս չէ՛ շին օրինացս վարդապետներուն մահացու հարուստ մը տալ, կամ սնոր օրէնքին անաքեաններուն բարձրացում յայտնել, այլ միմիայն պարզել ու լուսաբանել այն ահագին տարբերութիւնը, որ կայ մեր հարուստներու ընթացքին կամ անոնց ազգասիրութիւնը բնութեւն եղանակին ու մեր ներկայ ազգային գոտի տեսակէտին մէջ :

Մեր մէջ գետ գոտակարգային անտարբերութիւն չիկայ հարուստներուն գէ՛տ, գիտակցութիւնը ունինք յաւել ու մեր հարուստները բարեբարութիւնները ըրած են ու կրնան, բայց երբ կը մանենք ամբողջ ժողովուրդի մը ազատագրութեան հարցին մէջ, հոգ հայ հարուստը չի գտնուիր պարկեշտ փառաստան մը որ իր մասին բարեբարութիւնը, Խոստովորինք ամենք ալ որ մեր հայուստները ոչինչ ըրին կաւտովին, մեր ազգային դատին յաջողութեան համար : Երբէք չի տեսնուեցաւ ազգ մը որու ազատութեան կողմէն մէջ հարուստները այնքան անխաղաղաւ, այնքան կեղծամիտ ու թթալիտ եղած ըլլային որքան հայ հարուստները, որոնցմէ յիսուն ֆրանք փրցնելու համար, ատրճա-

պէս : Ասոնք արդէն սկիզբէն ի վեր ըստ կարի ջանացած են օրինակելի գիրք մը ունենալ հանդէպ ընկի, անտարբեր ու անպոյն հայ տարրին :

Իրենց մէջ գտնուած քաղաքի մը ուղղամիտ և խելահաս անձերու շնորհիւ, երկար ժամանակէ ի վեր կազմած են կոկիկ ընթերցարան մը՝ և շահաբխական կամ վաճառականական ընկերութիւն մը, կառավարութեան վաճարացեալ : Իսկ երկու գովելի ձեռնարկները յարատեւ և օգտակար շարունակութիւն մը պիտի կարենան ունենալ անշուշտ, եթէ երբէք մեր յարգելի արեւակիցները աւելի անկեղծ ըլլան իրարու հանդէպ, իրենց անձնական ու աննշան կիրքերը շարժառեւ և իրենց փոխադարձ ջանքերուն աւելի ուժ տան :

Եւս վերջին կէտերը կը շնորհակալ, որովհետեւ կը ցուինք որ, վերջերս իրենց մէջ սարգած է շահախնդիր և անկարգ իր մէկը, որ միջոց չխնայելով խառնակելու և խուճելու պանգուխտներու հանգիստը, պանոնք իրարու դէմ՝ քիչաօրերով իր շահագիտութիւնները յագեցնելու համար : Մենք այժմ՝ անոր անունը չենք տաք, պարզապէս իրեն կարեւորութիւն շատու և շինքը այս փոքրիկ ակնարկով զուշացնելու համար, ի՞նչ երբէք ընթերցարանի ու ընկերութեան գէ՛տ իր ընթացքը շարունակէ, այն ատեն արդար դատողութիւնը մեզ պիտի պարտաւորէ զայն իր իսկական անունովն ու էութիւնովը յայտնել ու պախարակել հրապարակաւ :

Նակը կուրծքին ու գտնակը պկին գնելու էլ իր : Հայ հարուստը իր հոգիին սմայութիւնը եւ չկամութիւնը ծածկելու համար, չի վարանել զանազան նենգ եւ խուսափողական միջոցներու դիմել, գործիւնակ, մէկը կը պատճառաբանէր թէ ինքը կը վախնայ թիւրք կամ ուս կառավարութեան, որոնք կրնան իր շահերը վտանգել, ուրիշ մը ինքզինք Օղիւստ Գօնդի աշակերտ կը հռչակէր, յայտարարելով որ ինք ազատամիտ երեսնց կ'օղիւստիւնիս, ուրիշ հակառակ յեղափոխութեան : Այդ Աստուծոյ ատենակն այսպէս քաղաքի նազը խորհած էր յեղափոխականներուն դէմ շատու համար : Վերջապէս պատրաստակներու ամբողջ ժողովուրդ մը որու մեծածաւալ հատորին ճակատը կտորը էինք քանդակագրի ճայ հարուստին ժլտութիւնը :

Հայ հարուստին այդ տղը վարմունքը բոլորովն աննշտար շանցաւ օտարներու աչքէն, այնպէս որ ըրէ՛այ վախառու ժողովրդի անունը որ կը շարսեն մեր երեսին, փութովի ծեծուած ալիքներու պէս, չկրցին հերքել յոյս տալով քաղաքակրթ աշխարհին որ՝ մենք կըրնա՞ք հարստանալ : Ճիշդ է, բայց գիտենք նաև ազատութեան գոյափոխ-

Այս անգամ մեր նպատակը երկար տեսութիւններ րնելէ աւելի համառօտ և անշտ լուսնէր հարգել ըլլալով ակնարկ մըն ալ նեանք Պուրբէշի բնիկ հայերու մէջ պատահած վիճարանութեան մը վրայ:

Ինչպէս ժամանակին գրուած է տեղոյս եկեղեցոյն վրայ կը հրակէ թաղ, խորհուրդ մը, որ ուրիշ գործ մը չէ ունեցած, եթէ ոչ տարիներէ ի վեր եկեղեցին ու պարսպը ենթարկել ողբալի գրութեան մը: անոնց վարչութեան գէժ ժողովուրդը քանիցս բողոքած, բայց ամեն անգամ ալ անխիղի մնացած է:

Դեռ այս շարժում, պետական նախկին բարձր պաշտօնէն ալ ալմի հանգստեան կոչուած պր. Մանուկ Իվանտեան, բնիկ պուրբէշցի, հայ, Կապու բողոքաբար մը ուղղեց Ռուսմանիոյ իրական նախարարութեան թուելով ներկայ թաղ խորհուրդը՝ եկեղեցիին գրածէն «հարիւր հազար ֆրանք ոչնչացուցած ըլլալը» իրական վատտերով աղաչեց պ. նախարարին՝ խիստ քննութեան մը երթարկել թաղական տարիներէ ի վեր գործած զեղծութիւնը: Այս խնդրագիրը որ տեղոյս Ռուսմաներէն «Հայրենասէր» անուն մէկ լրագրին մէջ ալ հրատարակուեցաւ օտարներու մէջ ալ խոսակցութեան առարկայ դարձաւ: Յաւալի է իրերու այս տըխուր դրութիւնը: Պէտք է գիտնալ թէ Ռուսմանահայ բոլոր գաղթականները ըստ կամս կառնեն, կը գործածեն եկեղեցիներու ահագին եկամուտները: այս աճէնը ձեռնհաս առաջնորդի մը

բացակայութեան արդիւնքն է: Երա նութեան վրայ երկար պիտի խօսուին:

Դարձեալ շարժմը առաջ գումանակն «ճշմարտութիւն» անուն մեծ օրաթերթին մէջ, Քէօսթէնէն «Պատմա» կեղծանունով մէկը «ճիշտեանակի» թարգմանութիւնն հրատարակած էր Ռուսմաներէն լեզուով և ոտանաւորի ձեւով: բայց բաւական չափով էր թարգմանութիւնը: Այդ զովելի գործը կատարողը, որ անշուշտ հայ անհատ մըն է, շատ լաւ ըրած պիտի ըլլար, եթէ հետզհետէ ջանար ծանօթացնել հայերէն ընտիր կորներ թէ Ռուսմաներուն և թէ մանաւանդ Ռուսմանահայերուն՝ իրենց հասկցած լեզուով: միայն թէ պէտք է ջանալ որ աւելի խնամքով թարգմանուին և գրութիւնները չկորսուցնեն իրենց հարիւր և անուշութիւնը:

Յաւալի լուր մըն ալ կեսարացի հայու մը ինքնասպանութիւնն է: Պ. Սարգիս Սըմսարեան մայիս 5ին ինք ձեռքով վերջ տըռած է իր կեանքին: Կրտսի թէ պնտածառը իր ազգականներէն մէկը եղած է, որ իր 7,8000 ֆրանկը կողոպտելէն ետքը յաջողութիւն չէր ալ ըստ նիւտալ խեղճը տեսնելով որ նիւթապէս փճացած է, յուսահատութեան վերջ տուեր է իր կեանքին: նամակ մը ձգելով, ուր կը պատմէ իր ինքնասպանութեան պատճառները: Ինքնասպանը կը

թողու կին մը և երկու զաւակ՝ անոք և անտերունչ: Իսկ զինքը խաբու իր ազգականին գէժ խիստ քննութիւն մը բացուած է կահավարութեան կողմէն: Կը յուսանք որ իրողութիւնը կը պարզուի շուտով:

Սարգիս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մանուկների էֆրեարի մէջ կը կարգանք թէ Տ. Ներսէս Վարդապետ Դանիէլեանի առաջարկին վրայ բարեփոխ ազգային մը խոստացեր է զանգակ մը նուիրել Զէյթունի Մայր Եկեղեցիին:

— Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոսը օրհնութեան անդրանիկ կոնդակ մը խրկած է Կիլիկիոյ բոլոր թեմականներուն, կոնդակը ընդարձակ խրատական մըն է բոլոր Եպիսկոպոսներուն վարդապետներուն, քահանաներուն, հարուստներուն, երկրագործներուն և նոյն իսկ կիսներուն ուղղուած և հայրական ու մտերմական շնչով մը գրուած: Մահակ կաթողիկոսը խրկած է նաև մասնաւոր կոնդակ մը եկեղեցական պաշտօնեաներուն և Թագական Խորհուրդներուն անոնց պարտականութեան վերաբերեալ հրահանգներ տալու համար իրենց: Ռորիչ կոնդակ մըն ալ պատրաստած է խրկել ամեն անոնց, որոնք դրամական նուեր մը կուտան Աթոռին օրհնութիւն մը խնդրելով:

— Բաղէշէն Եզնիկ Վարդապետ Պոլսոյ Պատրիարքարանը խրկած

իր մէկ ընդարձակ նամակովը նկարագրեր է Մալազկերտի վերջին երկրաշարժէն առաջ եկած թշուառութիւնները: Քաղաքին շրջակաները գտնուող Ողջկան, Բագրան, Թոնտրակ, Խոնարրակ, Տորիք, Եօթանլը, Քարաքայի, Տօլազպաշ և ուրիշ շտա մը գիւղեր վնասուած են: Պուլանըքի Լաթա գիւղին մէջ բազմաթիւ մարդեր մեռած են: Իսկ քիչ զնասուած գիւղերուն մէջ կան թաթար — Գալէ Քէօբարիւր և Բուր: Եզնիկ վարդապետ վերջացուցեր է իր նամակը Պատրիարքարանէն նպատակն ընդ ընդ արկածեալներուն համար:

— Ռուսահայ Տիկին Նասիրեան հազար բուլլի նուիրեր է վանի Սալնապատի Ս. Գրիգոր վանքին որբանոցին և խոստացեր է ամեն տարի 500 բուլլի տալ նոյն որբանոցին:

— Իլմիրէն Մանուկէի էֆրեարին գրուած նամակ մը կը յայտնէ թէ քանի մը շաբաթէն Պ. Մանթաշեան հոն հրթալով պիտի տանի տեղոյս առաջնորդ Մելիքսեդեկ Եպիսկոպոսը Բարիլ իր հոն կառուցած հայ եկեղեցիին օժուժը կատարել տալու համար:

ՓՈՔԻ ԹՂԹԱՏԱՐ

8 Մայիս 1903 Պուրկազ

Տեղոյս ազգայնոց մէջ ալ ինք պատ Զէյթունի հանգանակութիւն մը կատարուելով 195 ֆր. 20 սանթիմ գոյացած է, որուն վրայ թորիկեան Եղբարք աւել:

համար գոհել եւ ստրկութեան դէմ ըմբոստանալ: Այդ սիրուն ժեսը պիտի սրբէր մեր ճակատն շատ մը սեւ բիծեր, բայց չեղաւ եւ կարծես մեր կործանի վրայ գամուած կը մնան կապարէ առտերով—իզծի վրայ ծանրացող բնոսն մը պէս—սա ամօթանք դատակնիքը «ստրուկ, վախճառ, շարաշահ, երկշտ ու կոտորած» պաշտ ազգ մը: Դեռ սմիտ էր առաջ եւրոպական կարեւոր լրագրի մը խմբագիրը—որ սրտցաւ հայու մը չափ իր գրիչը նուիրած է Հայութեան դատին— հետաքրքրուէն կը հարցնէր.—բաւական հայ հարուստներ ունիք չե՞ք: միթէ՞ չեն օգնիր անոնք ձեր ազգային յարժման, ինչ պէս ըրին Յոյն հարուստները Յուստանի ազատութեան համար: Անմիջական եւ ամէկոտ պատասխանը այն հայուն որ մտիկ կընէր Եւրոպային սա եղաւ.—«մեր հարուստները ժամ կը յինեն արքայութիւն երթալու համար, երբեմն, երբեմն աղքատներու ու զարոցներու կողմէն, բայց նայրենիքի պատասխան ճաշակը չունին դեռ: Ա. ք պահուն մոռցուեցաւ ըսել հայ հարուստին էն բնորոշ յատկութիւններէն մէկը, այն է՝ աղքատ հայ վարժապետին որ անօթի ծարաւ սիրտ կը հասցնէ բան

ստրկեցնելու համար ազգին զաւակներուն, չը խղճահարկով ըսելը, «ինչ է, հայ է, թող ազգասիրտար ձրի դատասիրակէ ազգին զաւակները»: Կամ շատ, շատ հարուստը կը պահանջէր որ քանի մը դահեկան ասան վարժապետին անօթի ստրկու լու համար: Այսպէս տներս էր հայ հարուստը դէպի հայ վարժապետին կողմէն: որուն ձրի ազգասիրտութիւնն անշուշտ իր զաւակներն ալ պէտք էին օգտուել:

Ես կուզեի վեր հանել սա կէտը—ճշմարտութիւնը, եթէ կուզէք—որ մեր հարուստները երբէք ազգասէր չեն եղած, այլ պարզ բարեբարներ, աւետարանական ոգրմութիւն տուողներ, եւն: Այնպէս որ ի վերջի հառաջանքներ ու բառաշահքներ արձակել Պայեօզեանի մը կամ Թամհարեանի սպանան վրայ, կամ պրտակներ հիւսել Մանթաշօֆի մը ճակատին, զանոնք տիպար ազգասէրներ ներկայացնելով հասարակութեան:

Նախ, ըսենք, որ մեր յեղափոխական գործին մեծագուէս վնասեցին հայ հարուստները, որոնց մատնութիւններովը այնքան զոհեր տուինք՝ որոնց համար այնքան կակոզացողներ չեղան որքան եղան ամուլ ու խոտասիրտ հայ փողատէրին համար: Տեսնեք թէ ինչպէս մէկը Պալեօզեանի մահը ողբերգ

զեց, անոր դաղտնի ժամերուն եւ ազգասիրտներուն ըրած բարեբարութիւնները յիշելով, ու արհամարտ լուսնութեանով անցաւ զոհ երկրասարդներուն վրայէն, որոնք ազգային այս ճգնաժամին մեր յոյսերն էին, եւ թէ ինչպէս ուրիշ մը «ենէնէն» անուանեց ժամհարեանի մը սպանիչ: Ներք եւ որ շուտով արձագանգ գտաւ իրտիրտ եւ քիչ-քիչ հողիներու մէջ, կարծես ուրիշներ նուազ ազգասէրներ եղած ըլլային, եւ որքան անխառն են երբեմն այդ կարգի հայրենասէրներ, որոնք հարուստները փառաբանելու մոլութիւն ունին եւ կը սիրեն միշտ մեծ աղջկայ պէս առաջ վազել:

Որովհետեւ Թամհարեանի մը սպանութիւնը այնքան աղմուկ եւ սրտմտութիւններ առաջ բերաւ շատ մը զարգացած շրջանակներու մէջ՝ կարծէ որ քննադատ ակնարկով մը վերլուծենք ազգասիրական ըմբոստմը եւ տեսնենք թէ հայ հարուստները մինչեւ որ աստիճան ազգասէրներ են: Ինչ չեն անոնք որոնք Թամհարեանը կուզեն ներկայացնել իբրև արիւար ազգասէր: Ոչ ք կուրանայ օր Թամհարեանը բարեբարութիւններ ըրած եւ որքան պահած է, բայց այդքանը բաւական չէ ազգասէր կողմէն կամ ազգային կրօնատարիտութեան արժանանալու համար: Ա-

նոր գործին մէջ կայ ոգորմասիրտութեան գծեր, որոնք պէտք չէ շփոթել ազգի մը դիտակցութեան ազնիւ եւ հպարտ գծերուն հետ: Մեր հարուստները տիրացու ժողովրդի մը տիրացու հարուստներ եղած են:

Թամհարեանի բարեգործութիւնը երբէք չի տարբերի այն բարեգործութիւններէն, զորս վախեցնիք մարդասէր եւ պայցիներէ, միսօնարներէ: Եղան եւրոպացիներ այնքան բարի եւ այնքան վեհանձն դէպի հայ թշուառները, որոնց առէւ պէտք է նամանան ամենափառասէր եւ փոքրօքի հայ հարուստները: Այս կէտը մտքերնիս պահենք երբ պատգային հայ ժողովուրդը ազգային եւրոպացիներու թեմէն ազնիւ պարտք մը կատարէ: Մինչ մեր հարուստները ինչ որ ըրած են պարտականութեան մը բռնի եւ կեղծ քողին տակ կատարած են որպէսզի չտուի իրենց համար, «տես սանկ են բան մը չեն ըսներ», եւ այդ հարուստները մէկ անգամ կուտան բայց երկրորդին կը վնասեն իրենց դուրը ափ անուղը: Եղան մինչեւ իսկ հայ հարուստներ, որոնց երբ գիտում կըլլուէր, չամչնալով եւրոպացի հարուստներու կը զրկէին, որ անոնցմէ ստակ ուղեն:

Հանգիստս ս
(Շարունակելի)

ցուցած են 200 ֆրանքի պումար մըն ալ. որ հրէայ վաճառականն մը առնուած էր, Բորիկեան Եղբարց յարմար գատած մէկ բարենպաստակ հաստատութեան ներուիրելու համար. այդ վաճառականին հետ եղած գատը մը երկու անձերու միջամտութեամբ վերջանալովը:

Ամբողջ գումարը 19 զաղ. ոսկու վերածուելով խնայուած է Պատրիարքարան՝ ճիշտ նպատակին ծառայեցնելու խնդրանքով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍՍԱ

Ռուս ժողովուրդին կողմէն տեղաբնակ հրէաներուն դէմ գործ գրուած կոպտութիւններէն ու վայրենութիւններէն դառնացած հրէայ ժողովուրդը սկսած է խուռն բաղմութիւնով Ամիրիկա գաղթել. կըսեն թէ արդէն միայն նիւ Եւրօքի մէջ աւելի շատ հրէայ կայ քան ամբողջ Վարչաւիայի մէջ: Օտեսայէն դուրսին նայելով հրէաները 65,000 շոգենաւի սոմա առած են Ամերիկայ երթալու համար:

Նիքոլա կայսրը Ռեքազով մը պաշտօնանկ ըրեր է Բիշնէվի կառավարիչ Բապըն զօրավարը վերջին հակահրէական շարժումներու ատեն իր ունեցած թոյլ ընթացքին համար: Ռուսական մամուլին և կղերականներուն մեծ ցաւ պատճառած այդ հակասեմական ծայրահեղութիւնները:

Կոմս Լամստորֆ օտար դիւանագետի մը կ'յայտարարէ թէ Ռուսիա ամեն ժամանակէ աւելի խաղաղասէր տրամ սգրութիւններ ունի և թէ ռուս քաղաքականութեան հիմը կը կազմէ ընդհանուր խաղաղութեան անվթար պահպանումը:

ՄԱԿԵՆՈՒՅԱ

Սեր քաղաքէն 2, 3 ժամ հեռի գտնուող Պատիցա գիւղին մէջ տեղի ունեցած ջարդին վրայ հետեւեալ մանրամասնութիւնները կը գտնենք պուլկար թերթի թերու մէջ: Ապրիլ 21ին առտուն կանուխ պաշարուած էր արգէն դիւղը 800 կանոնաւոր զօրքերէ և 200 ձիաորներէ: Գիւղին մէջ կը գտնուէին ծանօթ ապստամբապետ Տէլչէֆին խումբը 15 հոգիէ բաղկացած: Մինչև և կէս գիշեր կը տեւէ արիւնալի կռիւ մը, թուրք զօրքերու ընդհանուր հրամանատարին կարգադրութիւնով կը հաւաքուին բոլոր գիւղացիները որոշեալ տեղ

մը և հոն կսկսի սսկայի սսկայի կոտորած մը: Բոլոր կիները և սղիկները կը մորթուին բռնաբարուելէ ետքը: Գիւղին ունեցած 115 տուները մոխիր կը դառնան: Գիւղին բոլոր բնակիչներէն կոպտուի միայն 25 հոգի որոնք պաշարուածն առաջ գուրքը կը գտնուէին: Յեղափոխականներէն կիսան 7 հոգի, որոնց մէջ էր նաև խմբապետ Տէլչէվ: Իսկ մնացած 8 հոգին կընան հեռանալ: Չարղը տեղի ունեցած է, կըսուի, կեդրոնական կառավարութեան հրամանով, երեք օր վերջը 3 թուրք պաշտօնեաներ գացեր են ջարդին տեղը անոր հետքերը ջնջելու համար:

Ֆր. ցայթունկին ըսածին նայելով այս պահուս Սէլանիկի, Իւսքիւպի, Մանասթըրի, Սքիւտարի և Եանինի նահանգներուն մէջ 140,000 թուրքական զօրք կը գտնուի, և այդ բանակին երկու երրորդը կը կռուի ապստամբ խումբերու հետ:

Ռուս կառավարութիւնը իր Պոլսոյ դեսպանին միջոցաւ առաջարկեր է թուրք կառավարութեան որ հարկ եղած իրատէն տրուի Միթրոպիտայի մէջ ճիւղերու պիւնի սպաննութեան տեղոյն վրայ ռուսական եկեղեցի մը կամ վանք մը շինելու համար:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Թայմզ թերթը խօսելով պուլկար կառավարութեան վրայ յոյս կը յայտնէ թէ Բաջօ Բէթրովի նախարարութիւնը պիտի ջանայ վերահաստատել նախկին յարաբերութիւնները թուրքոյ հետ որոնց շնորհիւ Սթամպուլօֆ կրցեր էր մեծ օգուտներ տալ մակեդոնացիներուն: Սակայն նոր նախարարութեան այս ծրագրին դէմ արգելքներ կրնան յարուցուի Աւստրիոյ 2 Ռուսիոյ կողմէն: Վերջինները չպիտի թոյլ տան ռեէ համաձայնութիւն թուրքոյ և պուլկարիոյ միջև առանց իրենց վաւերացումին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յրանսական վաճառականութեան և ճարտարուեստից Պանքան առաջարկեր է 25 միլիոն ֆր. փոխ տալ հելլէն նաւատորմի սնտուկին, երաշխաւորութիւն առնելով փարոսներու և նաւաբանդիստներու հասցիները: Յունական կառավարութիւնը այդ դումարով պիտի գնէ 3 թորփիլանա և 6 թորփիլանա և պիտի նորոգէ միւս զրահաւորները: Արիչ պանթա մըն ալ առաջարկեր է 25 միլիոն ֆր տալ պատերազ

մակտն սնտուկին մասնաւոր երաշխաւորութիւնով: Պանքան կառաջարկէ 6 ամիսէն հարիւր հազար հրացան տալ հելլէն բանակին և փամփուշտի գործարան մըն ալ հիմնել Երկրին մէջ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Պէրլինի գիտական շրջանակներուն մէջ կը տիրէ սա կարծիքը թէ այս ամառ օգոստոսից պիտի ըլլան Ատլանտեան Ովկիանոսին վրայ երթելու կողջող շոգիւնները սառի բլուրներ տեսած են ամեն կողմ: Ատիկայ ցոյց կուտայ թէ այս տարի եղանակը մեղմ է բեւեռային գաւառներու մէջ և այս պարսպային ամառը ցուրտ և անձրեւոտ կըլլայ հիւսիսային և հարաւային Եւրոպայ: այս բանը անով ալ կը հաստատուի թէ ֆիննական ծովերը պիտի վրայ մեծ քանակութեամբ ճերմակ կէտ ձուկեր երեցած են:

ՍԵՐՊԻԱ

Վիեննայի արքունական շրջանակներուն մէջ պատուով լուրի մը նայելով Սերպիոյ Ալէքսանար Թագաւորը պաշտօնական այցելութիւն մը պիտի կատարէ Վիեննա յառաջիկայ աշնան:

ԱՆԳԼԻԱ

Ռորթմուլթէն հասած լուրերը կը հաւաստեն թէ Եդուարդ թագաւորը յստաջիկայ յունիսին իր արքայակէն զրօսանալով պիտի այցելէ Գերմանիա և Ռուսիա: Անգլիացի գնդապետ Նորմէն Հըքֆիլդն իր գլխուն տուած ըէվոլյութի հարուածով մը վերջ տուեր է իր կեանքին: Գնդապետը, որ 62 տարեկան էր, անքնութենէ կը սառապի եղեր:

ՎԷՆԷՏՈՒԷԼԻԱ

Կառավարութիւնը Բարաքասի գերման դեսպանին յանձնէր է իր պարաքին վեցերորդ մասնավճարը 316,263 ֆրանք ոսկեպրամ:

ՀՐԱՇԱԼԻ ՍՐԴԻՒՆԲ

ՄԱԶԻ ՆԵՐԿ
Ա Ն Ն Մ Ա Ե
Կը մրցի և բողոքական առաջնակարգ ներկերու հետ:

Սղիցոսթիւնը վայրկեանական և բոլորովին անվնաս:
Մէկ ամսէն աւելի կը տեւէ:
Չեռք կը բերուի բնական սեւ գոյն, նոյնպէս շագանակագոյն, ըստ գործածութեան:
Դիմել Վառնա՝ Չարպիանէլեանի կամ Պրք. Միհրան և Լրանդի:

ՊՕՏԿԵՐՅԱՐԴ ՎԱՋԳԷՆ-ԵՐԳԱՐԱՆ

Լոյս տեսաւ «Վազգէն»-Երգարանը, բանաստեղծութիւններու, ազգային յեղափոխական, սիրային և ժողովրդական երգերու ճոխ հաւաքածուն, որուն անհամբեր կ'սպասէր ընթերցասէր հոյ հասարակութիւնը:

600 մեծադիր երեսներէ բաղկացած, ընտիր թուղթի վրայ, գեղեցիկ պատկերներով զարդարուն, սոյն երգարանը մեծ պակաս մը կուգայ լրացնելու մեր ազգային գրականութեան մէջ:

Գինն է, ճամբու ծախքով 4. 50
Գնել փափագողները դիմելու են Ք. Հօրանեան 379 Բ. Օ. Պօֆս, Լիմ Մաս. (Ի. Ս. Ա.)

Ձեռքէ կը ծախուի նաև Հայրենիքի տպարանին մէջ

Հայրենիքի Ռուպ. Բօ.

61 հստե Ս.Պօսթոն Մաս. (Ի. Ս. Ա.)
Արասանմանի համար 5 ֆրանք
Պարսկաստանի համար 4 ֆրանք

Ծանօթ.՝ Սոյն երգարանը որպիսի որ քանի մը անձերու անհասական յանքերով հրապարակ ելած է, սակայն ամբողջ հասցիքը յասկացուած է զուտ բարեսիրական գործի մը:
ՀՐԱՏԱՐՈՎԻՉՆԵՐ

ԱՁԴ

Սեր բոլոր այն բաժանորդները, որոնք դեռ չեն վճարած իրենց բաժնեկիները, թող հաճին անյապաղ մեզ հասցնել զանոնք: Կը յիշեցնենք իրենց թէ մեր բոլոր ծախքերը կանխիկ ըլլալով չենք կրնար թերիւ ապառիկ ծախել:
Խմբագր.

ԵՐԻՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԻՔ

Կրեց սնդիլիայի Ռելիլիւմ Ուօթընի բանաստեղծը և հայերէնի թարգմանեց Խոսրով. կը ծախուի յիսուն սանթիմի դիմել թարգմանչին՝
Մ. ՄՐՄԷՆ ԱՐՏՕՆԶ
43 Տուկլու Րօ s
Մհսրօն (Անկղղիւր)

ՕՏԳՈՐՈՒՆԷ

Мурадъ-Краносянъ

Почтагиза „Возникостьъ Вѣра